



# ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

30 դեկտեմբերի 2009թ.

ք. Ստեփանակերտ

24-Ն

## ՈՐՈՇՈՒՄ

### ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 21-Ի ԹԻՎ 07-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Դատական ծառայության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ մասը, 18-րդ հոդվածի 4-րդ մասը, 19-րդ հոդվածի 4-րդ մասը, ղեկավարվելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատական օրենսգրքի 43-րդ հոդվածի 3-րդ մասի 11-րդ կետով՝ ԼՂՀ դատարանների նախագահների խորհուրդը

## ՈՐՈՇՈՒՄ Է

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատարանների նախագահների խորհրդի 2009թ. ապրիլի 21-ի «Դատական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար փակ և բաց մրցույթների անցկացման կարգը հաստատելու մասին» թիվ 07-Ն որոշմամբ հաստատված հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

ա/ 54-րդ կետի 2-րդ պարբերության երկրորդ նախադասության «(ճիշտ կամ սխալ լինելը» բառերից հետո ավելացնել «և ստացած միավորը» բառերը.

բ/ 61-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «61. Մրցույթի արդյունքների ամփոփումից հետո Հանձնաժողովը կազմում է ամփոփիչ արձանագրություն մրցույթում հաղթող ճանաչված մասնակցի կամ մասնակիցների վերաբերյալ և ոչ ուշ, քան հաջորդ օրը ներկայացնում տվյալ պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձին»:

գ/ 65-րդ և 69-րդ կետերը ուժը կորցրած ճանաչել:

ԼՂՀ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ  
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ